

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

ՍՈՒՐԲ ԳՐՔԻ
ԲԱՐԲԱՆԱՅԻՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱՐԱՐՅԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Նայոց լեզվի պարմական ընթացքն ուսումնասիրողները այս կամ այն կերպ հաստատում են, որ Կարբեր ժամանակներում գրական լեզվին զուգահեռ գոյություն են ունեցել նաև մեր լեզվի Կարածքային Կարբերակներ: Այդ Կարբերակները բնութագրելու համար հաճախ գործածում են Բարբառ, խոսվածք, գավառաբարբառ, ռամկերեն, ստորին լեզու և այլ եզրույթներ: Նին հայերենի մասին խոսելիս Բարբառ ասելով նկարի է առնվում, և մենք նույնպես այդ կերպ ենք վարվելու, գրական լեզվից՝ գրաբարից Կարբերվող խոսակցական, ժողովրդական լեզվավիճակը: Ահա փորձենք պարզել, թե հայ իրականության մեջ, հայերեն գրավոր խոսքում սուրբգրային թեման որքանով էր խոսակցականացել, պահպանվել՝ են արդյոք Բարբառային կամ խոսակցական հարվածներ:

Ա. Դեռևս վաղ միջնադարում Բարբառների Կարածվածության մասին մի շարք վկայություններ կան: Դիմոխիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանիչները կամ մեկնիչները, օրինակ, հունարենի դորիական Բարբառի դիմաց հայերենի համար դնում են Գորդայից կամ Կորճայից Բարբառը: Թրակացու մեկնիչները որպես խոնարհված բայ գործածել են **գեամ, գեսա, գեայ** ձևերը, և դրանք, ըստ Նրաչյա Աճառյանի, հայերենում գ-ի քմայնացման բնորոշ օրինակ են, ինչը ուշ միջնադարից արդեն փոխում ենք Վանի, Ղարաբաղի և այլ Բարբառներում՝ կյամ, կյաս, կյա: Եզնիկն իր «Եղծում» այսպիսի մի ակնարկ ունի՝ «Յորժամ մեք ասեմք թէ սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ», ուր **սիք-այս** բառային գույքը նույնպես Կարածքային-Բարբառային Կարբերակ է: Եզնիկը Այրարարի Կողբ բնակավայրից էր, ուրեմն իր այս խոսքում իրար են հակադրվում հայերենի հյուսիս-հարավ Բարբառային խմբերը, և «ստորնեայք» ասելով նկարի են առնվում Մեծ Նայքի հարավային գավառները:

Բարբառների գոյության և նույնիսկ թվարկման չափազանց ուշագրավ մի փաստ է Ը դարում Սյրեփանոս Սյունեցու քերականության մեջ պահպանված հարվածը, ուր հեղինակը գրում է. «Եւ դարձեալ զքո լեզուիդ գիւրելն զբովանդակ բառսն զեզերականս, որպէս **զԿորճայն և զՏայեցին և զԽութայինն և զՉորրորդ Նայեցին և զՍպերացին և զՍիւնեցին և զԱրցախայինն**. այլ մի՛ միայն զՄիջերկրեայն և զՈստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի Կաղաչափութեան, այլ և օգտակարք ի պարմութիւնս, զի մի՛ վրիպեացի անընդել գոյով լեզուացն»¹: Եթե շրջանցենք այս հարվածի շուրջ եղած բանասիրական վեճը, ապա կարելի է փաստել, որ Սյրեփանոս Սյունեցին խոսում է Կորճայքի, Տայքի, Խութի, Ծովքի, Սպերի, Սյունիքի, Արցախի Բարբառային Կարբերակների առկայության մասին՝ արդեն Ը դարում:

Գրաբարին զուգահեռ Բարբառների գոյության մասին են վկայում նաև պահպանված սուրբգրային մի շարք փաստեր, որոնք սփռված են միջնադարյան մարենագրության էջե-

1 Ն. Ադոնց, Դիմոխիոս Թրակացին և հայ մեկնիչները (ռուս.), Մ. Պր., 1915, էջ 187:

րին: Դրանք միաժամանակ վկայում են, թե ինչպես մեծ հեղինակություն էր վայելում սուրբգրային թեման ժողովրդի խոսքում: Ահա գրաբար կանոնիկ բնագրերին գուգահեռ Աստվածաշնչի խոսակցականացված հատվածների գոյության մի քանի պարամիկ-փաստեր. Դագար Փարպեցին ակնարկում է, որ գոյություն են ունեցել ԺԶ Սաղմոսի թարգմանության երկու փարբերակներ ևս ասում է. «Յագեցան **կերակրօք**, ասէ,- որ միւս եւս թարգման՝ **խոզենեաւ** ասէ,- և թողին զմնացուածս փոյայոց խրեանց»²: Անշուշտ «կերակրօք»-«խոզենեաւ» բառային գոյգը վկայում է բարբառային փարբերակների գոյությունը:

Նաման Արեւելցին (Թ դար) իր «Մեկնութիւն քերականին» երկում գրում է. «Ի վաղիւն քեսանէ գՅիսուս զի գայ³, գոր **գռեհիկքն յեզուց ասեն**. եզուց դառնամք»: Ուրեմն ըստ այս վկայության՝ Թ դարում արդեն նկատելի էր այլևս հնչյունական անցումը, ինչպես այս օրինակում է՝ այգուց>եզուց⁴:

Ավելի ուշ շրջանից Մխիթար Գոշն իր «Դարաստանագրքի» Ը գլխի «Յաղագս երդման» հատվածում մեջբերում է՝ «Այոն այո լիցի, և ոչն ոչ. որ է **հան՝ հա, և ոչն՝ ոչ**»⁵: Նույն երկում մի այլ փոքր նույնը կրկնում է այս ձևով՝ «Այլ եղիցի ձեր բան, այոն այո և ոչն ոչ... այսինքն զհայն հա և զհն չէ»: Մխիթար Գոշն այդպիսով գրաբար փոքսփոք պարզեցնում, խոսակցականացնում է՝ առավել հասկանալի դարձնելու համար:

Նման պարամիկներ էլի կարելի է բերել, որոնք վստահաբար ապացուցում են, որ իրոք միջնադարում Սուրբ Գրքի և հոգևոր այլևեղևուցու կողմից վաղուց կանոնացված գրականության ու գրաբար լեզվին գուգահեռ ժողովրդի խոսքում դարերով կիրառվել են դրանց խոսակցական, բարբառային փարբերակները: Երկար ժամանակ գոյապետած լինելու շնորհիվ է, որ դրանք արժանացել են մեր մարենագիտների ուշադրությանը և, անկախ դրանց հանդեպ ունեցած վերաբերմունքից (սպորին, գռեհիկ լեզու), մարենագիտները չեն կարողացել շրջանցել և որոշ դրվագներ ներմուծել են իրենց աշխատությունների մեջ:

Բ. Ուշ միջնադարից պահպանվել են նաև Սուրբ Գրքի աշխարհիկ որոշ պարամիկներ, որոնցից մեկի վրա մի փոքր ավելի մանրամասն կանգն կառնենք:

Ուշ միջնադարի գերմանացի Յոհաննես Շիլթերգեր (1396-1427թ.) աստվածաբանը ԺԵ դարի սկզբներին ուղևորվել և միաժամանակ ապրել է Արեւելքում, հեղինակ է ուղեգրության, որի մի շարք գլուխներում փվյալներ կան հայերի ու Նախաստանի մասին: Շիլթերգերին և նրա գրքին դեռևս Ի դարասկզբին անդրադարձել է «Նանդես ամսօրեայ»-ն, որի 1909 թ. համարներից մեկում գերմաներենից թարգմանաբար համառոտ ներկայացվում է հայագետ Ն.Ֆինկի մի հոդվածը⁶: Շիլթերգերին և նրա Ուղեգրությանը հետազայում նույնպես անդրադարձել են, իսկ 2004 թ. ամբողջական երկը գերմաներենից թարգմանվել է հայերենի և հրատարակվել⁷:

2 «Գաղտնիք քովը լցան որովայնը նոցա, յագեցան **կերակրովք** և թողին զմնացուածս փոյայոց խրեանց», Սաղմ. ԺԶ, 14: **Դագար Փարպեցի**, Նայոց պարմութիւն, Եր., 1982, էջ 92:

3 «Ի վաղիւ անոր քեսանէ գՅիսուս զի գայր առ նա, և ասէ. Աստասիկ գառն Աստուծոյ...», Յովի. Ա. 29:

4 Տեն Ն. **Աճառյան**, Նայոց լեզվի պարմություն, մաս 2-րդ, Եր., 1951, էջ 384:

5 «Այլ եղիցի ձեր բան՝ այոն այո, և ոչն ոչ. զի անելին բան գայն ի չարէն է», Մարթ. Ե. 37:

6 Տեն «Նանդես ամսօրեայ», 1909, թ. 1, էջ 30-31. «Նայր մերը ԺԵ դարու հայ արեւելեան գաւառաբարբառով»: Երեսնի Մ. Մաշտոցի անվ. Մարենագիտանում (թ. 1970) պահվում է Ն. Շիլթերգերի «Ուղեգրության» 1859 թ. հրատարակությունը Կ. Ֆ. Նոյմանի առաջաբանով:

7 Տեն **Յոհաննես Շիլթերգեր**, Ճանապարհորդություն, Եր., 2004, գերմաներենից թարգմ. Է. Մակարյան:

Նեղինակն իր ողեգրության մեջ հաճախ է գործածել հայերեն բառաձևեր, որոնց մեջ նկարելի են բարբառային հնարքեր. Asswatz togu chu miechk (=Ասաված թողու թո միևիսը), Ogornica (ողորմիա), Kathagnes (կաթողիկոս), Takahawr (թագավոր), varthabied (վարդապետ), Նան՝ Սյոս (Սիս), Երզինգեն (Երզնկա):

Խիստ ուշագրավ է նաև գերմանացի հեղինակի կողմից թե՛ հայերեն բառերի բարբառային ձևերի գործածումը, թե՛ ծանուցումները հայերի մասին: Այսպես՝ «Հայերն ... իրենք են ընկրում իրենց պարբիարքին, որին անվանում են կաթողիկոս (Kathagnes), իսկ արքաներին թագավոր (Takahawr)» (էջ 99):

«Քահանան իջնում է խորանից և մեկ-մեկ աջը դնելով առջևից անցնող փղամարդկանց ու կանանց գլուխներին՝ ասում. «Ասաված թողություն քա մեղքերից (Asswatz togu chu miechk)» (էջ 103) և այլն:

Անշուշտ գերմանացի հեղինակը ինքն է անձամբ լսել խոսակցական այդ ձևերը և գրի առել: 1859 թ. գրքի հրապարակիչ Կ.Նոյմանն իր առաջաբանում կարծիք է հայտնում, որ «(Շիլլերգերը) յուրացրել է հայոց լեզուն, որով նա ոչ միայն պարզապես խոսել է, այլև գրել»: Իր գրքի 62-րդ գլխում հեղինակն ինքն էլ հայտնում է, որ հայերն իրեն սովորեցրել են հայոց լեզուն և Հայր մերը⁸:

Շիլլերգերի երկի 67-րդ գլխում պահպանվել է Dschulad (բնագրում այդպես է) քաղաքի հայերի խոսվածքով Հայր մեր-ը, որը բարբառագիտական տեսակետից որոշակի հեղափոխություն կարող է ներկայացնել: Այսպես այն մեջբերում ենք նախ Շիլլերգերի գերմաներեն փառադարձությամբ, ապա՝ Ն. Ֆինկի հայերեն փառադարձումով.

Har myer ur ergink es, Surp eytza anunn chu, Ka archawun chu, Jegetzy kam chu, Hyergickch yep ergory, Hatz meyr anhabaz tur myes eisor, Yep theug meys pardanz, Hentz myengckch theugunch meyrackch perdabanz, Yep my theug myes y pywerczuchin, Haba prige myes y tzscheren. Amen. ⁹	Հայր մեր որ յերկինք ես, Սուրբ իցէ անուն -Քո, Գայ արքաուն -Քո, Եղիցի կամբ -Քո Յերգիցի ես յերկրի, Հաց մեր հանապազ քուր մեզ այսօր, Եւ թող մեզ պարպք մեր, Հայնց (=հէնց) մենք թողունք մերոց պար- տապանաց, Եւ մի՛ թող մեզ ի փորձութիւն, Ապա փրկէ մեզ ի չարէն: Ամեն:
--	---

Նկարելի է, որ չկա Հայր մեր-ի Փառաբանության մասը՝ «Զի -Քո է արքայութիւն...»: Ֆինկը ենթադրում է, որ դա ԺԴ-ԺԵ դդ. արևելքում հասարակված Դոմինիկյան միաբանության ազդեցության արդյունք է: Անհավանական չէ ենթադրել նաև, որ նման փոփոխության ակունքը կարող էր աշխարհիկ լեզվի ներմուծությունը լինել:

⁸ Այս մասին առավել մանրամասն խոսում է Գ.Ե.Պ. Արզախյանն իր «Հայ փղագրության նախապատմություն» գրքում, Եր., 2001: Տե՛ս նաև Յ.Շիլլերգերի երկի հայերեն թարգմանության առաջաբանը:

⁹ «Հանդես ամսօրեայ»-ում և Գ. Արզախյանի՝ հիշարակված գրքում բերված փառադարձումները մեկ-երկու տեղում փոքրերով են միմյանցից: Մեջբերում ենք ըստ «Հանդես ամսօրեայի»: Տառադարձված տեքստն ամբողջությամբ մեջբերված է նաև Ա. Մադոյանի՝ Շիլլերգերի հիշարակված գրքի առաջաբանում:

Շիլթերգերի երկում պահպանված բնագրային այս հատվածի շուրջ կարելի է մեկ-երկու նախնական ենթադրություն անել: ա) Անովագն ուշ միջնադարում խոսակցական մակարդակում սուրբգրային որոշ հատվածներ գրաբարից փոխադրվել են բարբառների կամ գրաբարը հանդես է եկել բարբառայնացված տեսքով, և դրանք հաճախ լայն տարածում են ստացել հայերի տարբեր շերտերում: բ) Գրաբար և խոսակցական տարբերով միախառն այս հատվածում նկատվելի են և՛ արեւելահայ (eisor), և՛ արեւմտահայ (ergory, anhabaz) հնչյունական տարբեր, և դա մի հավելյալ վկայություն է այն բանի, որ ԺԵ դարում մեր լեզվի երկու ճյուղերը այսօրվա պարկերացրած իմաստով դեռևս չէին տարբերվել: գ) Նստակորեն նկատվելի է բաղաձայնների ձայնեղացման երևույթը (երգինք, հանաբազ, հաբա), ուրեմն՝ առնվազն ԺԴ–ԺԵ դարերի սահմանագծին բարբառային այդ տեղաշարժն արդեն գործող օրինաչափություն էր հայերենի մի շարք բարբառներում:

Ի հավելումն ներկայացված հատվածի արժեքները նաև հայերեն հնարիպ գրքերից մեկում պահպանված՝ Տերունական աղոթքի մեկ այլ տեքստը, որում, ինչպես կերևա, նկատվելի են մի բանի տարբերություններ «Նայր մերի»՝ ամենքիս հայրնի գրաբար բնագրից: 1661թ. Ամստերդամում տպագրված Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» գրքի (տպագրիչներ՝ Մարտեոս Ծարեցի, Անտիս Դիմենցի, տպարան՝ Ս. Էջմիածնի և Ս. Մարգարի) 600-614 էջերի մեծ հիշատակարանն ավարտվում է «Նայր մեր»-ով, որում առկա մի բանի տարբերություններն ընդգծում ենք.

«Նայր մեր, որ յերկինս ես, ս[ուրբ] եղիցի անուն Բո, եկեսցէ արքայութիւն Բո, եղիցին կամք Բոր ո[րա]լէյս յերկինս և յերկրի: Չհաց մեր հանապազորդ փութ մեզ այսօր: Թող մեզ **պարտութիւն** մեր, ո[րա]լէյս և մեր թողումք մերոց պարտապանաց: Եւ մի **տար** գմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ ի չարէն, զի Բո է արքայ[յ]ութիւն և **Բո են** փառք յաւիտեան. ամէն»¹⁰:

Գ. Աստվածաշնչի գրքերից աշխարհաբար առաջին ամբողջական թարգմանական նմուշը պետք է համարել «Պարգաբանութիւն հոգեւորաւ Սաղմոսացն» գիրքը՝ տպագրված 1687թ.¹¹: Այս գրքի առաջաբանում նշվում է, թե խոջա Նահապետը տեսնելով որ իրավացիներն ունեն ամենքին հասկանալի՝ նոր աշխարհիկ լեզվով Սաղմոսարան, ինքն էլ ցանկացել է ունենալ նույն գիրքը հայ ժողովրդական լեզվով: «Բանզի թեպէր և այլք թրիստոնայք երգեն յարաժամ յեկեղեցիս իւրեանց գնոյն Սաղմոսն Դարթի ըստ պարշաճի աւուրն և ըստ պիտանաւորութեան[ան] որպէս և հայք, բայց ո՛չ այնքան յաճախ: Զի **հայք ո՛չ միայն եկեղեցականք, այլև աշխարհականք եւս** արարաթյ եկեղեցոյն միշտ և հանապազ ունին գնա ի բերան».- Սաղմոսարանն աշխարհիկ լեզվով թարգմանելու և տպագրելու կարևորությունն այսպես է մեկնաբանվում գրքի առաջաբանում: Նահապետը իր փափագը հայտնում է Կ.Պոլիս, բայց այստեղ գործն ընթացք չի ստանում: Ապա Վենետիկում նույն ցանկությունը հայտնում է Նովիանոնես վարդապետին, որը և աշխարհաբարի է փոխադրում Սաղմոսարանը: Նման ձեռնարկի հեղինակներն այսպես են բացատրում իրենց մտադրությունը. «գմեկնութիւնս զայս այնու դիտաւորութեամբ **շարադրեցաք մեր աշխարհօրէն, զի կարիցեն**

10 Ներսես Շնորհալի. Յիսուս Որդի, Ամստերդամ, 1661, էջ 614: Մետրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, հնարիպ գրքերի բաժին, թիվ 127:

11 «Պարգաբանութիւն հոգեւորաւ Սաղմոսացն Դարթի, ի նուստը Յովհաննիսէ վարդապետէ Կոստանդնուպոլսեցոյ տպագրեցեալ արդեամբ և գոյիք Ազուլեցի խօճայ Գուլնազարի որդի խօճայ Նահապետին», Վենետիկ, 1687:

աշխարհական ամենեքեան դիրապէս իմանալ գտոյն, քանզի եկեղեցականք ունելով զբաւական կրթութիւն եւ գոստում, յարածամ ճաշակէն զբաղցրութիւնս սրբազանից գրոց, իսկ աշխարհականք որք պարապին ի զբաղմունս եւ ի հոգս աշխարհի, ամենեւին մնան անմխիթարք ի յայսպիսեաց շնորհաց»¹²:

840 էջ ընդգրկող ընդարձակ այս գրքի լեզուն գրաբարի, արեւմտյան եւ արեւելյան աշխարհաբարերի միախառնում է: Քերականական ձևերի մեծ հանդիպում են թե՛ արեւմտահայ, թե՛ արեւելահայ իրողություններ, կան նույնիսկ **ինձանից, քեզանից** ձևերը, թեև հեղինակը պոլսեցի լինելով՝ ընդհանուր ոճը արեւմտահայերենն է¹³:

Ներկայացնում ենք համառոտ նմուշներ այս փայլազիր Սաղմոսարանի փայրերը էջերից՝ նրա լեզվի մասին ընդհանուր պարկերացում կազմելու համար: Այն քաղել ենք ԳԱԱ գրադարանի համացանցային կայքէջում տեղադրված օրինակից.

«Ինչ մարդ որ զիս կու տեսանէր, փնակ կանէր, պոնկներովն կու խօսէր եւ կու հայեղէր եւ զիւր գլուխն ինձ վերայ դիրտուր կու փայր եւ կասէր. վա՛ն որ քակէիր զփաճարն:

«Սրեր են իւրեանց լեզուն թրի նման, որ զիս չարախօսեն եւ դարապարտեն եւ իւրեանց նենգաւոր շրթունքներն աղեղներն դառն խօսքերի նկերով լարեր են եւ պապրաստեր են: Որ գաղտուկ ձգեն եւ խոցուրեն այնպիսի խեղճ եւ անմեղ մարդիքն, որ սրբերն ուղիղ է եւ կուզեն, որ յանկարծ ձգեն իւրեանց դառն խօսքերի նկերն, որ ինչպէս իւրեանց դիպաւորութիւնն է այնպէս վիրաւորեն զնոսա եւ ամենեւին Աստուծոյ արդար դարաստանէն չի երկնչին:

«Բայց դո՛ւք, ո՛վ ախտաւթապաշար ժողովուրդք, զգուշ կացէք, ձեր անիրաւութիւնն եւ նենգագործութիւնն մի՛ յուսայք եւ մի՛ ցանկանայք թէ այլոց ինչն եւ ապրանքն յափշտակէք եւ թէ մեծութիւնն եւ հարստութիւնն առաւել նման այլ ձեզ վերայ թափվի, ձեր սրբի սէրն եւ յօժարութիւնն ամենեւին նորա վերայ մի՛ ձգէք, եւ մի՛ խաբիք վասն ընչից եւ ապրանաց»:

ԺԷ դարում, հայրնի է, գրական աշխարհաբարը դեռեւս ձևավորված չէր այսօրվա մեր պարկերացմամբ, եւ այս գիրքը կարելի է համարել վաղաշխարհաբարյան առաջին ամբողջական գիրքը: Նաև հստակ կարելի է պնդել, որ «Պարզաբանութիւն հոգեհոսաց սաղմոսացն» գիրքը սուրբգրային թեմաներով առաջին աշխարհաբար գիրքն է:

Դ. Սուրբ Գրքի բովանդակությունը աշխարհիկ լեզվով փարածելու հարցը միշտ էլ օրակարգի վրա է եղել հայրկապես բողոքական եղեկեցու հետևորդների, այդ թվում՝ բողոքականությունը հայերի մեծ փարածողների համար: Թեև թարգմանական հարվածներն իրենց ժամանակին հաճախ ունեցել են քառգլխական երանգ, սակայն այս դեպքում մեզ հետաքրքրում է դրանց սոսկ լեզվական, աշխարհաբարյան կողմը:

Նախ պետք է ասել, որ հայրկապես ԺԹ դարի գրականության մեջ բարբառ կամ գավառաբարբառ ասելով հաճախ նկատի էր առնվում նոր ձևավորվող աշխարհաբար գրական լեզուն: Եւ այդպես էլ շար փայլազիր գրքերում նշվում է գավառաբարբառ՝ նկատի ունենալով մեր այսօրվա պարկերացրած աշխարհաբարը: Այդպիսիք են, օրինակ՝ «Նոր Կրակարան, Կ.Պոլսի բարբառով» (Փարիզ, 1828), որ փայլազրվել է Վիեննայի միաբան Շ. Յովհաննես Զոհրապեանի ջանքերով: Նաև՝ «Նոր Կրակարան, հնդկահայոց բարբառով», 1834 եւ 1839, Կալկաթա եւ այլն :

¹² «Պարզաբանութիւն...», էջ 8:

¹³ Տե՛ս Ն. Աճառեան. «Սիւն», 1940, թ. 5-6, էջ 132:

Թարգմանվել և փարբեր պարբերականներում ու գրքերում փապագրվել են նաև զուր քարբառային փարբերակներով տուրբգրային մի շարք հատվածներ:

«Բիւրակն» հանդեսը, որ ժամանակին իր էջերը լայնորեն փրամադրում էր հայրկապես մեր լեզվի թուրքահայ հատվածի քարբառներից բնագրեր, ուսումնասիրություններ, բառաշարքեր հրապարակելուն, 1899 հուլիսի 7-ի համարում բերում է Նովհանում Ավերաբանի ԺԲ գլուխը Անրիոթի գյուղերի խոսվածքով, փոխադրողն է Զ.Կենճեան: Գ.Նանանյանը այդ փոքսյը համարում է Նաջի-Նարիլի խոսվածք¹⁴, որը Անրիոթից Մուսա լեռ փանող ճանապարհի հայաբնակ առաջին գյուղն էր, Ի դարի սկզբներին ուներ 300 փուն հայ բնակիչ, գլխավոր ուխտապետին՝ Ս. Ասրվածածին եկեղեցին, խոր հնություն ունեցող կառույց էր: Անրիոթի այդ խոսվածքով Յովհ. ԺԲ. 24-25 հատվածը, օրինակ, («Ամեն ամեն ասեմ ձեզ, եթե ոչ հարն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի, ինքն միայն կայ, ապա եթե մեռանիցի, բազում արդիւնս առնէ...») հնչում է այսպես. «Իս ձի գիւղիւրթ գիւղիւրթ կ'եսիմ, թը ցերիւր հեօր չինէր գիյրէյն ու միռնայր, էնը պէս կօ. ըմմը թը կը միռնայ, շիւր համաղ կօ փու: Անըր գէյր վիճիւրը կը սիթիյ գան կը սիլի (=կարձակէ). օ անըր գէյր վիճըրփը կը ցօրփի (=կարէ), եսս էիւշօր էպերի էօմըրէն կօ պըիի գան»¹⁵:

Նույն պարբերականը նույն հատվածը փոխադրել և փապագրել է նաև Զեյթունի բարբառով, որն ունի հետևյալ հնչումը. «Իօգիւր, իօգիւր ասիմ ձիգ, էյէր ցօնիւն հօրը գիւրէնը անկնիլէօլ չը մէրնա, ինքը պէս կու մօնիօ. ամմա էյէր մէրնա շօր մահաու կու փօ, իւլ իյ իյ մայմիւր կու սիթէ, գէն թող կու փօ. ու իւլ իյ էս աշխայիս մէջ իյ մայմիւր կարէ, չիյ էպերի կեանքին մէջ կու պէիէ գինը»¹⁵:

Զեյթունի բարբառի է փոխադրվել և անգամ առանձին գրքով Կ.Պոլսում փապագրվել Մարկոսի ամբողջական Ավերաբանը¹⁶:

Գրքույկի «Յառաջաբանի» (էջ Ա-Բ) հեղինակն է Ֆ. ՈՒ. Մէքալըմ, ինչպես ստորագրությունից է պարզվում՝ «Խմբագիր Անրաբերի»: Բողոքական հայերի «Անրաբեր» հանդեսում է փապվել նաև այդ փոխադրության մասին Լեոն Խաչապուրեանի գրախոսականը¹⁷: Գրախոսողը Մարկոսի Ավերաբանը Զեյթունի բարբառով թարգմանողի անունը նշում է Գրիգոր Է.Ֆ. Գերմանիկեան, Ֆ. ՈՒ. Մէքալըմն իր առաջաբանում՝ Գրիգոր Է.Ֆ.Էնրի-Բերմանիկեան:

Այս հրապարակության առաջաբանում նշվում է, որ թարգմանությունը համեմատված է հունարենի, հին և արդի հայերեն ու թուրքերեն թարգմանությունների հետ: «Այս ձեռնարկին նպատակն է ներկայացնել Անրաբանի պարզամը Զեյթունի և շրջակայի ժողովուրդներուն և բոլոր անոնց, որոնք այս գառաբարբառը ուրիշ ձևէ լեզուէ աղէկ գիւրեն»¹⁸: Առաջաբանի հեղինակ Ֆ. ՈՒ. Մէքալըմն ի դեպ գեյթունցիներին բնութագրելիս նաև նշում է, որ «անոնք նշանատու են իրենց քաջութեան համար, և պէրք է գիւրնալ թէ խորապէս կրօնասէր

14 Տե՛ս Գ.Նանանյան, Սվեդիայի բարբառը, Եր., 1995, էջ 10-12:

15 «Բիւրակն», 1899, էջ 442-443:

16 «Մարկոսի Անրաբան», Զեյթունի գառաբարբառով, Կ.Պոլիս, 1913, փապագրութիւն Ա. Յ. Պոյաճեան: Թղթակագմ, 64 էջ:

17 Տե՛ս Լեոն Խաչապուրեան, Մարկոսի Անրաբանը Զեյթունի գառաբարբառով (մարենախօսական). «Անրաբեր», 1913, էջ 327-328:

18 «Անրաբան ըստ Մարկոսի», Զեյթունի գառաբարբառով: Տե՛ս Յառաջաբանը:

ալ են: Անոնք զարմանալի հաւասար ունին Աստուծոյ վրայ եւ իրենց գիտութեան չափով չեն թերանար պաշտել զանիկա»:

Բնագրի լեզվական առանձնահարկությունների մասին խոսելիս պէտք է ասել, որ հարկապես նկատելի է ա>օ հնչյունափոխված ձևերի առատությունը՝ մարդ-մօրդ, ասաց-ասօց, շար-շօր, սեղան-սեղօն եւ այլն, ներկան ու անկապարը կազմվում են կո, կու մասնիկներով՝ կո փնտէր, կո բիրըն, կու քարոզէր, կու հանէր եւ այլն: Թեւեւ վերջին դեպքում կու մասնիկի առկայությունը պէտք է համարել գրական արեւմտահայերենի ազդեցություն, քանի որ բուն Զեյթունի բարբառում առավել փարածված էր ներկայի գո մասնիկի գործածությունը¹⁹:

Ներկայացնենք մի հարված Զեյթունի բարբառով քաղաքոված Մարկոսի Ավերարանից, գլուխ Գ. 1-4. «Թէքոր ժողովարանը մտրով, հէօն մորդ մը կէար, Էօնիւր ձէառքը չիրցիր: Կէօզլեմիշ կոկենըն Էօնիւր թէ շաբթ Էօրը սաղծընէ՞ զէան, Էօր զէամմ Էնին զէան: Ձէառքը չիրցիրերը Էան մարդոն ասոց. Իլ ուրթալըիւլըս կոնէ: Ու ասոց Էօնիւնց. Շաբթ Էօրը չի՞րք վաճիպէ Էնիլ, Էյիբմը Էնի՞լ թէ քէօթիւլիք Էնիլ, հիզէ՞մը խըլասիլ թէ կըշնըցնիլ...» (Էջ 5):

Միջնադարյան աղբյուրներում եւ ուշ շրջանից պահպանված պատրառիկներից բացի հարուկորդ այլ հարվածներ եւս կան սփռված այս կամ այն պարբերականի էջերին կամ դեռեւս չքաղաքված ձեռագրերում: Օրինակ՝ Մեղրեցի Մարթեոս Շահյանցի ձեռագրում պահվում է նաեւ Նայր Մեր աղոթքը՝ Մեղրու բարբառի վերածած, ձեռագիրն էլ, ըստ Էդ. Աղայանի, պահվում է ԵՊՄ գրադարանում²⁰:

Այս համառոտ ակնարակը, կարծում ենք, գալիս է ապացուցելու, որ սուրբգրային թեմատիկան հայ իրականության մեջ ունեցել է որքան եկեղեցական, գրական, նույնքան՝ ժողովրդախոսակցական գործածություն: Ընչպէս է, դրանք կանոնիկ չլինելու պարճառով գրավոր խոսքի մեջ գրեթէ չեն ներմուծվել, սակայն պահպանված պատրառիկներն էլ բավական են ասելու, որ ավերարանական եւ հոգևոր այլ թեմաներն իրենց գուգահեռ գործածությունն են ունեցել բարբառներում, լեզվի խոսակցական այլ փարբերակներում, ի վերջո՝ ժողովրդի լեզվում ու կենցաղում:

19 Տե՛ս Ա.Ղարիբյան, Նայ բարբառագիտություն, Եր., 1953, էջ 427:

20 Էդ. Աղայան, Մեղրու բարբառը, Եր., 1954, էջ 9: